



Լ. Հ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ԱՍՈՐԱԿԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ*

156. Եվ թե ինչպես Աստված իր ողորմածությամբ մարգարեներ ուղարկեց՝ քանզի, որպեսզի նրանք քարոզեն կենաց ճանապարհը, և նրանք վերադառնան իր մոտ: Մարգարեների ձեռքով նա մեծամեծ և սքանչելի հրաշքներ գործեց, որպեսզի նրանք հասկանան ու գիտենան, որ ինքն է արարիչն ամենայնի:

157. Եվ թե ինչպես նա հայտնեց մարգարեներին իր միածին որդու գալստյան մասին, որը հավերժ նրա հետ է ու նրա միջոցով է ստեղծել ամեն ինչ, որ տեսանելի է կամ աներևույթ, և որը նրա իմաստությունն է, նրա գործությունը, նրա կերպարանքն ու պատկերը, նրա փառքի ճանապարհը:

158. Եվ մարգարեների միջոցով նա քարոզեց ողջ աշխարհին, որ նա հայտնվելու է արարածների մեջ ու մի չամուսնացած կույսից մարդ է դառնալու, ենթարկվելու է չարչարանքների, խաչելության ու մահվան, և դրանցով սպանելու է մեղքը, սատանային և մահը:

159. Նա հարություն է առնելու մեռյալների միջից, փրկելու է մարդկանց և համբառնալու իրեն առաքողի մոտ, իր հետ վեր բարձրացնելով մեր մարմինների երախայրիքը, և նստելու է Հոր աջ կողմից՝ նրա, ով իրականացրեց մարգարեների խոսքերը, որոնցով մարգարեանում էին նրա մասին, և հաստատեց նրանց ասածները:

160. Նախ և առաջ Գաբրիելը հղության մասին ավետեց սուրբ կույս Մարիամին, Դավթի տնից: Եվ նա մարմնացավ Սուրբ Հոգուց ու Մարիամ անարատ կույսից, հրաշքով ծնվեց նրանից, մինչդեռ պահպանվել էր նրա կուսության դրոշմը: Եվ նա, ինչպես առաջ, մնաց Աստված՝ անփոփոխ, անալյալ, անշփոթ և անխառն՝ մեկ, բայց Աստված և մարդ, միավորված սքանչելի կատարելությամբ:

161. Նա մանուկ դարձավ, որը կաթ էր ծծում՝ փաթաթված խանձարուրով ու դրված մսուրի մեջ, մինչդեռ երկինքն ու երկիրը լցված էին նրանով, և նա իր ծնողի հետ իշխում էր ամեն ինչի վրա:

162. Եվ հրեշտակներն իջան ու նրա ծրուհուն ավետեցին հովիվներին, ասելով. «Ծնվեց ձեր փրկիչը, որ օծյալ Տերն է, Դավթի քաղաքում»⁷⁶: Ու փառաբանելով նրան, նրանք ասացին. «Փառք Աստծուն բարձունքներում, իսկ երկրի վրա խաղաղություն և մարդկանց բարի հույս»⁷⁷:

163. Այդ հովիվները եկան ու տեսան նրան մսուրի մեջ խանձարուրված, և ցնծացին ու փառաբանեցին Աստծուն:

164. Դարձյալ ուղարկեց մի աստղ, որը ձգեց պարսից մոգերին, և նրանք ընծաներ բերին նրան՝ ոսկի, զմուռս և խումկ. երեք ընծա բերին, որոնք ծածուկ խորհուրդ էին պարունակում: Ոսկու միջոցով նրանք ընդունեցին նրա ամենակալությունը, զմուռսի միջոցով՝ նրա կենդանացուցիչ մահը, իսկ

* Ծարուսանված «Էջմիածին» ամսագրի 1987 թվականի № № ԺԱ—ԺԲ-ից և 1988 թ. № № Ե—Զ-ից:

⁷⁶ Հմմտ. Դով. Բ, 11:

⁷⁷ Հմմտ. Դով. Բ, 14:

խնկի միջոցով, որ նա Աստված է հավիսեմից:

165. Օրենքի համաձայն նա նաև թվատվեց, բերվեց տաճար, և նրա համար գոհ մատուցվեց: Նա աճեց բոլոր մարմնավոր հասակներին համապատասխան, պահպանեց օրենքը, որը նախապես տվել էր իր ծառա Մովսեսին, և մեզ ազատեց նրա պարունակած նզովքներից:

166. Իսկ երբ հասավ երեսնամյա հասակին, մկրտվեց Հովհաննեսի՝ իր քարոզչի ձեռքով, որին ուղարկել էր իր գալուց առաջ, ոչ թե՝ որվոհեմուն կարոտ էր, այլ որ պեսզի մեզ համար սրբացնի ջրերն իր մկրտությամբ և մեզ տա որդեգրության օրինակն ու գրավակաճը:

167. Երբ նա մկրտվեց ու դուրս եկավ ջրից, երկինքը բացվեց նրա համար, և մի ձայն եղավ, որն ասաց. «Դա է իմ սիրելի որդին, որին հավանեցի»⁸⁰: Եվ իջավ Հոգին աղավաղու մարմնի կերպարանքով ու հանգավ նրա վրա, թեև արդեն իսկ նրա մեջ էր բնությամբ, սակայն նրան մեզ համար ընդունեց նա, ով առաջ պատվիրանազանցության պատճառով լքել էր մեզ:

168. Եվ նա մեզ հայտնեց Երրորդության խորհուրդը՝ Հոր ձայնով, Որդու մկրտությամբ և Հոգու իջմամբ: Իսկ Հովհաննեսը վկայեց նրա մասին, ասելով. «Ահա Աստծու գառը, որը կրում է աշխարհի մեղքը»⁸¹:

169. Եվ նա փորձության ենթարկվեց սատանայի կողմից ու, հաղթելով նրան, մեզ տվեց հաղթանակը նրա նկատմամբ: Նաև սքանչելիքներ ու հրաշքներ գործեց՝ հարություն տվեց մեռյալներին, սրբեց⁸² բոլորներին, առողջացրեց անդամալուծներին, բացեց կույրերի [աչքերը], բուժեց հիվանդներին և ջուրը վերածեց ընտիր գինու:

170. Սակավ հացով կշտացրեց մարդկանց բազմությունները, որոնք կերան ու լիացան, վանեց դևերին ու [պիղծ] այսեր հանեց, լսեցրեց խուլ-համբերին և խոսողություն տվեց ծանրախոսներին:

171. Նա ընտրեց իր տասներկու առաքյալներին՝ պարզ ու հասարակ մարդկանց, որոնց իշխանություն տվեց թշնամու ողջ գործության դեմ: Եվ պատվիրեց նրանց ունենցվածք ձեռք չբերել՝ ո՛չ ոսկի, ո՛չ արծաթ, ո՛չ երկու շապիկ, ո՛չ կոշիկ և ո՛չ գավազան⁸³:

172. Այդ առաքյալները նույնպես մեծա-

մեծ հրաշքներ գործեցին նրա անունով: Իսկ ինքը շրջեց մարդկանց մեջ, ուսուցանելով ու ցույց տալով կենաց ճանապարհը և քարոզելով երկնային արքայությունը:

173. Իսկ նրանք այդ բարիքների վռխարեն չարությամբ հատուցեցին նրան՝ մահապատժի ենթարկեցին, խաչեցին փայտի վրա ու դրին գերեզման:

174. Երբ նա խաչ բարձրացավ, տաճարի դռան վարագույրը պատուվեց, ժայռերը ձայն տվին ու ողջ երկրում խավար տիրեց. նաև մեռյալները հարություն առան ու երևալսին շատերին:

175. Իր սպանմամբ նա սպանեց մեղքն ու սատանային, և իր մահվամբ մեղքեց մահն ու վերացրեց նրա իշխանությունը մեր վրայից: Իր իսկ կամքով նա խոնարհեց իր գլուխը և ավանդեց հոգին:

176. Նրա մահվանից հետո գեղարդով խոցեցին նրա կողը, որտեղից արյուն եջուր հոսեց, և իմացվեց, որ նա միաժամանակ Աստված է և մարդ, կենդանի և մեռյալ:

177. Նա իջավ դժոխք, ավերեց նրա գանձերը⁸⁴, կենդանացրեց մեռյալներին և, փրկելով նրանց, ովքեր մեռված էին այնտեղ և ովքեր ընդունեցին, որ նա Աստված է, ավազակի հոգու հետ նրանց տարավ դրախտ:

178. Երեք օր անց նա հարություն առավ մեռյալների միջից, բազմիցս երևաց իր աշակերտներին, շոշափվեց նրանց կողմից, կերավ ու խմեց նրանց հետ, և հարությունից հետո քառասուն օր մնաց աշխարհում:

179. Այնուհետև, միմյալ աշակերտները դիտում էին նրան, նա համբարձվեց երկինք այն մարմնով, որ ստանձնել էր իր գիտեցածի պես, և նստեց իր առաքչի աջ կողմում:

180. Նա դարձյալ գալու է դատելու ողջերին ու մեռյալներին: Նա մեզ համար եղավ մեջեջյալների երախայրիքը և գալիք աշխարհի հայրը:

181. Իր համբարձումից տասն օր հետո, ինչպես խոստացել էր իր աշակերտներին, նրանց ուղարկեց մխիթարիչ Սուրբ Հոգին, որը երբ իջավ ու հանգավ նրանցից յուրաքանչյուրի վրա, նրանք սկսեցին խոսել տարբեր լեզուներով:

182. Իսկ երբ նրանք զինվեցին Սուրբ Հոգու գործությամբ, ելան քարոզելու մեր Տե՛հ Հիսուս Քրիստոսի ավետարանը և վարդա-

⁸⁰ Հմմտ. Մատթ. Ժ, 5:

⁸¹ Հմմտ. Յովհ. Ա, 29:

⁸² Բնագրում վրիպմամբ տպագրված է zky փիլիպ. հմմտ. § 188:

⁸³ Հմմտ. Մատթ. Ժ, 10:

⁸⁴ Բնագրում՝ gzyh, որը գուցե պետք է ուղղել gwyh (ներսը, պարունակությունը). արարելիք—բարշտումի բնագրում դրված է sz'yoh՝ քաղը, որը Մ. վան Էսթրոկը թարգմանել է leur secret,

պետեցին բոլոր ազգերին, մկրտելով նրանց Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով⁸³։

183. Նրանք մարդկանցից դներ վանեցին, բուժեցին հիվանդներին, սրբեցին բորոտներին, մեռյալներ կենդանացրին, մեծամեծ հրաշքներ գործեցին, կործանեցին կոտորեցին և աշխարհը լուսավորեցին իրենց աստվածային վարդապետությամբ։

184. Նրանք իրենց ձեռքերում կրում էին խաչի նշանը, փառավորվելով նրանով և հաղթահարելով սատանայի բոլոր մոլորությունները։ Եվ Քրիստոսի սիրուց համբերում էին մեղությունների ու չարչարանքների։

185. Ուրախությամբ ընդառաջ էին գնում հալածիչներից հարուցված մահվան, մահավելով Քրիստոսին՝ իրենց Տիրոջը, որ օրհնադիրն էր նոր և հոգևոր պատերազմի։

186. Եվ թեև այդ առաքյալներն սպանվում էին, նաև իրենց սպանմամբ հավատի փութաջան քարոզիչներ էին դառնում և օրինակ իրենց ետևից ընթացողների համար։ Աստված նրանց նաև համբերություն տվեց չարչարանքների, տանջանքների ու խոշտանգումների դեմ, որոնց ենթարկվում էին հալածիչների կողմից։

187. Եվ դա՛ որպեսզի դներն ամոթահար լինեն և հալածիչները գիտակցեն Աստծու զորությունը, որը բնակվում է նրա սրբերի մեջ, և սուրբ վկաների պատերազմից հասկանան, որ կա Աստված, քանի որ նրանք իզուր չէ, որ ենթարկվում են դրանց։

188. «Եվ արդ, իմ սիրելիներ, եթե դուք ձեր ողջ սրտից դառնաք առ ողորմածն Աստված և խոստանաք նրա առջև, որ կըծառայեք նրան մաքրությամբ⁸⁴ ու սրբությամբ և ձեր մեղքերի համար մշտապես աղերս կմատուցեք ծոմապահությամբ, անընդհատ աղոթքով ու ողորմածությամբ աղքատների հանդեպ,

189. և կընթանաք ուղիղ, կշրջեք ձեր երեսը կոապաշտության բոլոր մոլորություններից և կխոստովանեք, որ նա է Աստված, որն ստեղծել է երկինքն ու երկիրը և նրանցում եղած ամեն ինչ, որ տեսանելի է կամ աներևույթ,

190. և նա է, որ ձեզ պետք է ընդունի իր բազում ողորմությամբ՝ ձեզ, որ բնակվում եք նրա մեջ, և ընդունելով ձեզ, պետք է քալի ձեր մեղքերը, ձեզ դարձնի սրբերի ծառանգորդը, վայելչացնի ձեզ երկնային արքայության մեջ, ձեզ բաժնի հատկացնի մարգարեների հետ, որոնք քարոզեցին նրա հայտնությունը, և աշակերտների՝ որոնք

քարոզեցին նրա երևումը, և վկաների՝ որոնք սպանվեցին նրա սիրուց»։

191. Նման և ավելի վայելուչ խոսքերով Քրիստոսի վկան՝ տեր Գրիգորը, խրատեց նրանց։ Իսկ նրանք լսում էին նրան և ուրախությամբ ընկալում նրանից։ Դառնապես արտասվելով, նրանք խոստովանում էին իրենց մեղքերը, ուրանում մեռյալ կոտորեցին և ընդունում, որ կա մեկ Աստված, որն ստեղծել է երկինքն ու երկիրը, որից և ստանում են այն շնորհը, որ նա իրենց փրկիչ, վարդապետ ու առաջնորդ է ողորկել իր ծառա Գրիգորին։

192. Իսկ թագավորը, որ վարագ էր դարձել, աղերսում էր Գրիգորին, ասելով. «Ներիր ինձ, տեր իմ, որ քեզ անխնա տանջեցի այդ դառն չարչարանքներով, որոնցից ինձ հարկ է գիտակցել, որ կա մի ճշմարիտ Աստված, որի համար դու կրեցիր դրանք, և նա էր, ուր քեզ զորություն էր տալիս։

193. Մարդկանցից ո՛վ կդիմանար այդ բաներին, որ ես արեցի քո նկատմամբ, եթե Աստված չաջակցեր նրան, ո՛վ կատեր իր կյանքի փրկությունը, եթե ոչ իմ մահն թըշվառականը⁸⁵։ Աստված մեզ համար քեզ փրկիչ ու վարդապետ ողորկեց, իսկ ես իմ կողմից քեզ կորստյան մատնեցի։

194. Բայց Աստված իր ողորմածությամբ քեզ պահպանեց մեզ համար, գանձը կենաց, հանուն կենաց օրվա։ Ի՞նչ անեմ ես՝ թշվառականս⁸⁶, քանզի մեզ վայել⁸⁷ չեն այն բաները, որ ես արեցի քո նկատմամբ։

195. Նաև այն ջահերին՝ այն սուրբ կրոնավորուհիներին, որոնք եկան մեր երկիրը, որպեսզի լուսավորեն նրան մոլորության խավարում և մեզ ցույց տան ճշմարտության ճանապարհը, ես չարաչար կործանեցի պեսպես մահվամբ։

196. Եվ արդ ես դիմում ու աղաչում եմ ձերդ սրբությանը աղոթել և խնդրել Աստծուց ինձ համար, որ ինձ մարդու ձեռքեր ու ոտքեր տա, որպեսզի ես այդ սուրբ վկաների համար աղոթարան կառուցեմ և Աստված գոհ լինի ինձանից»։

197. Քրիստոսի վկան՝ տեր Գրիգորը, աղոթեց նրա վրա, և նա ուներինք ներքև մարդ դարձավ, ինչպես առաջ, մինչդեռ ուսերից վեր վարագի մահան էր։ Ապա նա իր

⁸³ Բնագրում՝ *dyw'*, որը Մ. վան Էսթրոկը թարգմանել է *démon*, շփոթելով *dyw'* (դև) բառի հետ. հմմտ. արաբերեն-քարշունի բնագիրը, որտեղ դրված է 'Iš-y (թշվառական) բառը, որը Մ. վան Էսթրոկը ճշգրտորեն թարգմանել է *misérable*.

⁸⁴ Բնագրում՝ *spq*, որը Մ. վան Էսթրոկը քարշունի բնագրի մեմոնությամբ թարգմանել է *cachées* (ծածուկ)։

⁸⁵ Հմմտ. Մատթ. ԻԸ, 19։

⁸⁶ Բնագրում վրիպմամբ տպագրված է *dkwl'* փխ *dkywl'*.

հետ վերցրեց իր կնոջն ու քրոջը, և [սկըսեց] փորել ու կառուցել, իսկ նրանք գլորկով հող էին կրում:

198. Եվ դարձյալ խնդրեց սուրբ Գրիգորին, ասելով. «Տեր իմ, այն նեղութունների և դաժնագույն մահվան փոխարեն, որ պատճառեցի այս սրբուհիներին, թույլ տուր զնամ Մասիս, այսինքն՝ Ազատ»⁹⁹ լեռը, որը հեռու է այստեղից յոթ օրով, և այնտեղից քարեր բերեմ, որոնք այդ սրբուհիների վկայարանի դռան սյուները պետք է դառնան»:

199. Նրան թույլ տվեց, և նա զնաց Մասիս, այսինքն՝ Ազատ⁹⁹ լեռը, ու այնտեղից ութ մեծամեծ քարեր բերեց, որ քսան մարդ չէին կարող կրել: Իսկ նա չորսը բարձեց ուսերին, չորսը՝ բազուկներին, և դրանք սյուներ դարձրեց այն երկու վկայարանների երկու դռների համար, որ կառուցել էր հանուն այդ սրբուհիների:

200. Եվ նա արտասվելով աղաչում ու թախանձում էր նրանց աղոթել իր վրա, որ պենագի Աստված ների իրեն նրանց⁹⁹ սպանելու համար:

201. Երբ վկայարանները կառուցվեցին և դամբանները պատրաստվեցին, Քրիստոսի վկա տեր Գրիգորն այդ վկայարաններում պատանեց նրանց իրենց հանդերձներով, թեև նրան հոյակապ արքայական զգեստներ էին բերել, բայց չէր ընդունել դրանք նրանցից:

202. Չթողեց իսկ, որ թաղեն նրանց, ասելով. «Արժանի չեք, քանի որ դեռևս մկրտություն չեք ընդունել»:

203. Բոլոր նախարարները և մնացալ մարդիկ նրան խնդրեցին աղոթել թագավորի վրա, որ պենագի նրա դեմքը դառնա առաջվա պես: Այնժամ Քրիստոսի վկա տեր Գրիգորը նրանք քառասուն օրվա ծով պարտադրեց՝ երեկոյից երեկո:

204. Եվ նրանց կանգնեցրեց աղոթքի, հայացքներն ուղղած դեպի արևելք. նրանք աղերսում էին Աստծուն, որ ընդունի իրենց, քալի իրենց մեղքերը և չհատուցի իրենց գործերի համեմատ, այլ իր բազում ողորմությամբ ների իրենց սխալները:

205. Սուրբ տեր Գրիգորը նրանց խրատում և ուսուցանում էր կենաց ճանապարհը: Քառասուններորդ օրվա վերջում, մինչ նրանք կանգնած աղոթում էին և աղաչում ու պաղատում Աստծուն, հանկարծ Տրդատ արքան ցնցվեց, նրա դեմքը վերականգնվեց առաջվա պես, և նա կատարյալ մարդ դարձավ:

206. Բոլորն ուրախացան և զոհություն մատուցեցին ու փառաբանեցին Աստծուն, համբուրելով տեր Գրիգորի ոտքերը: Կային մարդիկ, որոնց մեջ չար հոգիներ էին բնակվում՝ և նրանք բուժվեցին, և բորոտներ՝ որոնք սրբվեցին, և հիվանդներ՝ որոնք առողջացան, և կույրեր՝ որոնք տեսան, նաև բազում մեռյալներ կենդանացրեց այդ քառասուն օրերին Քրիստոսի վկան:

207. Այնուհետև արքան և նախարարները հրամայեցին քանդել նրա տերության բոլոր կոտրքերի տաճարները և կործանել նրանց արձանները:

208. Բազավսն⁹¹ քաղաքում կար կոտրքերի մի մեծ տաճար՝ տասներկու նշանավոր, ոսկեպատ և արծաթապատ կոտրքերով: Այն հռչակված էր ողջ Հայաստանում, և նրանում բազմաթիվ դեր էին բնակվում:

209. Երբ հեծյալ արքան ու նրա բոլոր զորքերը, վերցրած իրենց հետ նաև սուրբ Գրիգորին, հասան այնտեղ, դերը զինյալ մարդկանց կերպարանքով ու ձիեր հեծած դուրս եկան և պատերազմեցին նրանց հետ: Նրանք նետեր և քարեր էին արձակում, որոնք թեև հասնում էին մարդկանց, բայց չէին վնասում նրանց:

210. Արքան և իր զորքերը հալածեցին նրանց, իսկ նրանք գոռալով ասացին. «Վա՛յ մեզ, քանզի Աստծու ողորմածությունը ողողեց ողջ աշխարհը, այժմ մենք ո՛ր փախչենք»: Իսկ Գրիգորը խաչակնքեց և

⁹⁹ Բնագրում՝ 'm'sys d'hw xrl (§ 199, m'sys d'hw xrl) «քառացի» Մասիս, որ է xrl: «Որ է xrl» կրկնվող արտահայտությունը ցույց է տալիս, որ խոսքը վերաբերում է Մասիսի ինչ-որ մականվանը: xrl բառը Մ. վան Էսբրոեկը թարգմանել է creusée (փորված). այն նույն կերպ է վերարտադրված նաև քարշունի բնագրում ու՛ճ q (Մ. վան Էսբրոեկի թարգմանությամբ՝ accidentée): Ասորերենում իսկապես կա xrl բայը, որ նշանակում է փորել, սակայն սրու գործածությունը Մասիս լեռան անվան հետ մեկ անիմաստ է թվում (արդյո՞ք նկատի է առնված Մասիսի վիհը): Պատահական չէ, որ Մ. վան Էսբրոեկը նշված բառը փորձում է բացատրել նաև այլ կերպ, և նթադրելով, որ xrl տառախմբի մեջ կարող է պահպանված լինել Արարատ բառի վերջավորությունը (տե՛ս M. van Esbroeck, Le résumé, 1978, p. 498): Սակայն մեզ ալելի հավանական է թվում, որ xrl (ուղղելի xrl) բառի տակ թաքնված է Մասիսի հանրահայտ Ազատն մականունը, որը հիշատակվում է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ և Ամանիա Ծիրակացու «Աշխարհացույցում» (հմմտ. ասորերեն xrl «ազատ» և xrwl՝ «ազատություն» բառերը):

⁹⁰ Բնագրում վրիպմամբ տպագրված է 'lyn փխոյն.

⁹¹ Բնագրում՝ 'bgwn հմմտ. M. van Esbroeck, L'n nouveau témoin, p. 103.

ասաց. «Գնացեք Կովկաս»⁹² լեռը, որը Հոռոմոց երկրում է»:

211. Եվ մույն պահին Գրանք արտասովելով անհետացան ծխի մեջ: Մարդիկ լսեցին Գրանք ձայնը և փառաբանեցին Աստծուն, որ փրկեց իրենց: Նրանք քանդեցին կուռքերի այդ տաճարները և, վերցնելով Գրանք ոսկին ու արծաթը, մի մասը բաժանեցին կարոտյալներին, մնացածը պահեցին եկեղեցիների շինության համար:

212. Այնտեղից գնացին Երեզ⁹³ քաղաքը, որտեղ կար մարդ պատկերող մի ոսկեծուլ արձան, որը երազներ⁹⁴ էր գուշակում: Նրանց զինյալ մարդկանց կերպարանքով և ձիեր հեծած դևեր դուրս եկան ու դաժան մարտի բռնվեցին Գրանք հետ: Նրանք մետեր և քարեր էին արձակում Գրանք դեմ, բայց չէին վնասում Գրանք:

213. Մարդիկ վախեցան Գրանքից, որովհետև դեռևս հաստատում չէին հավատի մեջ: Իսկ Գրիգորը, որ կանգնած էր բանակի ետևում, Հոգու շնորհիվ իմացավ [դա], փութաց եկավ Գրա [արձանի] առջև, դրոշմեց խաչանշանը, և մույն պահին դևերը ցրվեցին:

214. Նրանք արտասովելով ու ողբալով ասում էին. «Վա՛յ մեզ, վա՛յ մեզ, ինչե՛ր եկան մեր գլխին մի մարդուց, որ շղթայակալ էր: Նրա մարմինը պատառոտված էր, ինքն էլ մետված վիրապը՝ իսպառ կործանության համար, և Գրա հույսը կտրված էր մեր կողմից:

215. Եվ ահա նա եկել հայտնվել է մեր գլխին և մեզ հալածում է մեր երկրից: Չգիտենք ո՛ր փախչենք խաչի զորությունից»:

216. Իսկ Քրիստոսի վկան՝ տեր Գրիգորը, բացակայելից և ասաց Գրանք. «Գնացեք Կովկաս»⁹⁵ լեռը, որը Հոռոմոց երկրում է»:

Մարդիկ տեսնելով ու լսելով այդ բաները, ամրապնդվեցին հավատի մեջ և գոհացան Աստծուց, որ փրկեց իրենց:

217. Սուրբ տեր Գրիգորը բացեց իր քերանը և, խրատելով Գրանք, ասաց. «Տեսե՛ք, թե ինչպես ձեր չաստվածները, որոնց դուք երկրպագում էիք, անգոր գտնվեցին: Նրանք չօգնեցին մույնիսկ իրենց, չկարողանալով դիմադրել խաչի զորությանը»:

Իսկ դևերը ցրվեցին:

218. Այնուհետև մարդիկ ջերմեռանդ հավատով մտան ու կործանեցին այդ արձաններն ու կուռքերի տաճարը և Գրանք ոսկին ու արծաթը բաժանեցին աղքատներին:

⁹² Բնագրում՝ զլգws փխ զ'գws? Բմտ. անդ, էջ 109, 141—142:

⁹³ Բնագրում՝ 'rz. Բմտ. անդ, էջ 108:

⁹⁴ Երեզ-երազ. հայերեն մախօրհմակում թերևս բառախաղ է եղել:

Կուռքերի այդ տաճարը Գրանք հիմնահատակ արեցին: Այդպես Գրանք շրջում էին ողջ Հայաստանում և քանդում դրանք:

219. «Իրանից հետո արքան», մախարարները և դատավորները հավաքվեցին ու ասացին. «Մենք ուզում ենք ունենալ մի հովիվ, որ մկրտի մեզ, մերձեցնի Աստծուն և մեզ սովորեցնի կենաց ճանապարհը»:

Եվ բոլորը խնդրեցին սուրբ Գրիգորին, որ իր վրա վերցնի այդ բանը:

220. Իսկ նա հրաժարվեց, ասելով. «Ես արժանի չեմ միջնորդ լինելու Աստծու և մարդկանց միջև: Ձեզ համար ուրիշ մարդ նկատի ունեցե՛ք»:

221. Նրանք ասացին. «Դո՛ւ եղար մեր առաջնորդը, դո՛ւ ուղարկվեցիր Աստծու կողմից, որպեսզի մեզ սովորեցնես կենաց ճանապարհը, դո՛ւ վստահվեցիր լինել մեր առաջնորդն ու հովիվը, ո՛վ է քեզ պես արժանի դրան»:

Բայց նա չզիջեց Գրանք:

222. Ապա Տրդատ թագավորին երազում հայտնվեց, որ ոչ ոքի չկարգեն Գրիգորից բացի: Սուրբ Գրիգորին մույնպես հրեշտակ հայտնվեց, որն ասաց Գրանք. «Հնազանդվիր դրան, քանզի Գրանք քո հոտն են: Քո ձեռքով Գրանք դարձան առ Աստված, որպեսզի դու հավասարվես մարգարեների, առաքյալների և վկաների վիճակին»:

Իսկ նա ասաց. «Թող Աստծու կամքը կատարվի»,— և Գրանք հաղորդեց այդ մասին:

223. Այնժամ Տրդատ արքան հավաքեց իշխաններին, այսինքն Հայաստանի տասնվեց նշանավոր մախարարներին⁹⁶, որոնք Նոյի որդի Հաբեթի որդի Գոմերի որդի Թորգոմի հազարավոր ու բյուրավոր զավակների տերերն էին, բացի մեծ պատրիկներից⁹⁷:

224. Տրդատ արքան սուրբ Գրիգորի հետ դրանց ուղարկեց Իտալիա՝ Հռոմի պատրիարք Ղևոնդիոսին գրած հետևյալ նամակով. «Տրդատ, առաջնորդ Հայոց, թագավոր, առ Ղևոնդիոս պատրիարք Հռոմի՝ ողջունյալ,— իսկ ողջունյից հետո այսպես.

225. Տեր մեր, ահա պատմում և տեղեկացնում ենք ձերդ սրբությանը, որ մախկինում մենք գտնվում էինք մթության, մահվան ստվերի ու մեղքերի խավարի մեջ, քանի որ չունեինք լույս Քրիստոս Աստծուն և պաշտում էինք ձեռագործ կուռքերին:

⁹⁶ Բնագրում mlk' (արքան) բառի վրա դրված է հոգնակիի նշան, և Մ. վան Էսթրոկը համապատասխանաբար թարգմանել է les rois: Մեզ թվում է, սակայն, որ հոգնակիի նշանը դրված է սխալմամբ:

⁹⁷ Բնագրում բառացի mlk', հոգնակիի նշանով (=թագավորներ):

⁹⁸ Թերևս նկատի ունի Հայաստանի քոչվաներին:

226. Սակայն մեր Տեր, մեր Աստված, մեր փրկիչ Հիսուս Քրիստոսը մարդասիրաբար մեզ առաքեց իր ծառային՝ սուրբ տեր Գրիգորին, որպեսզի մեր փրկութունը ընդհատվի իրականացնա:

227. Բայց մենք չարչարեցինք այդ վերջին չին դառն տանջանքներով, որպեսզի մաւրանա ճշմարիտ Աստծուն և երկրպագի ձեռագործ կոտորեցին:

228. Եվ քանի որ մա չհամաձայնեց դրան, մենք մեզնից եմթարկեցինք մարդու գործությունից վեր տանջանքների, խոշտանգումների ու մեղությունների, իսկ դրանից հետո մեզնից անտեղի խոր վիրապը, որտեղ կային չարաբարո սողուններ:

229. Նա մատնվեց իսպառ կորսության ի հատուցումն մեղքերի, թեև մեզնից պատճառած չարչարանքներից էր, որ մենք պետք է հասկանայինք, թե ճշմարիտ է Աստվածն այն, որին մա քարոզում էր:

230. Դարձյալ մեր Տեր, մեր Աստված, մեր փրկիչ Հիսուս Քրիստոսը, որը չի կամենում մեղավորների մահը⁹⁸, ողորմածությամբ ձեր կողմերից մեզ ուղարկեց համբավովոր լույսեր՝ անարատ կանանց, սուրբ կրոնավորությունների, որպեսզի մեզ համար ճշմարիտ կենաց ցուցիչներ⁹⁹ դառնան:

231. Եվ քանի որ մեզնից տեղի չտվին մեր անառակությանը և չերկրպագեցին մեր սուտ աստվածներին, մենք մեզնից այլևայլ մահվամբ չարաչար կործանեցինք, մինչդեռ մեզնից աղոթում էին:

232. Այդ ընթացքում ես վարազ դարձա և իմ վրա կատարվեց այն գրվածը, թե մարդ, որ չգիտակցեց իր պատիվը, հանձնվեց գրաստներին ու մամուլեց մեզնից¹⁰⁰: Իսկ դեռ, որոնց մենք պաշտում էինք տիրեցին ինձ ու իմ պալատականներին, բացի իմ կնոջից ու քրոջից:

233. Այնուհետև բազում ողորմ և գթասիրտ Աստված, որը մեղավորներին չի հատուցում մեզնից գործերի համեմատ, որը պատժում է սիրով և խրատում գթությամբ, որը գնում է փնտրելու կորուսյալ ոչխարին ու մեզնից դրած ուսեղին քերում է փարախ, և որը գիտե, թե ինչ է լինելու, ինչպես այն, թե ինչ է եղել,

234. Մա մեզ հասար պահպանեց այդ Գրիգորին վիրապում, որպեսզի մա լինի բժիշկը մեզ ուղարկված հարվածների, որոնց մենք արժանի էինք, և որոնցից քիսեց շնորհը մեր հանդեպ:

235. Նա մեզ սովորեցրեց ճշմարտության

ճանապարհը և ողորմածությամբ մեզ հայտնեց, թե՛ «Մա է բժշկելու ձեզ այդ հարվածներից»: Եվ դա մեզ հայտնվեց առավելապես մեզնից, որ ապրելու հույսից զուրկ վիրապը մեզնից մարդը գտնվեց տասնհինգ տարի հետո:

236. Դրանից հետո, երբ մա եկավ, բազմապես խրատեց մեզ, բուժեց մեր վերքերը, մեզ սովորեցրեց կենաց ճանապարհը, և մենք մա շնորհիվ հավատացինք ճշմարիտ Աստծուն՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսին, ուրանալով մեր կոտորեցին, որոնց վերաբերեց մեր ողջ տերությունից: Մենք մեզնից խնդրեցինք, որ քահանայություն ընդունի ես, մեզ մկրտելով, մերձեցնի Աստծուն, բայց մա չհամաձայնեց:

237. Իսկ Աստված իր ողորմածությամբ մա մոտ հրեշտակ ուղարկեց և հրամայեց անել դա: Նաև մեզ երազում հայտնվեց, որ ոչ ոքի կկարգենք, մեզնից բացի: Եվ ահա մենք մեզնից ուղարկել ենք քեզ մոտ, որ ձեռքդ դնես մա վրա և մեզնից վախճանիս: Այդ հրամայի, տեղ իմ, արա այդ, աղոթիր մեզ համար ու մեզ արժանացրու Աստծու՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհին:

238. Բերելով մի կառք, որին լծված էր չորս ջորի և որի վրա դրված էր մի ոսկե-հուռ գահավորակ՝ դարսված արքայական հանդերձներով, Գրիգորին մատնեցին դրանց վրա և վերահիշյալ տասնվեց մահաբարների¹⁰¹ ուղեկցությամբ ճանապարհ ընկան:

239. Նրանք ընթացան ցամաքով ու ծովով, մինչև որ հասան Իտալիո երկիրը: Մտնելով Հռոմ քաղաք, մեզնից մամուլեց հանձնեցին Ղևոնդիոս պատրիարքին: Նա շատ ուրախացավ, հավաքեց իր եպիսկոպոսներին ու կղերականներին, և սուրբ Գրիգորին Հայոց կաթողիկոս կարգեցին:

240. Հինգ օր մեծ ուրախությամբ մնացին այնտեղ, և պատրիարքը գրեց մի պատասխան մամուլ, որն ինչպես կշտամբանք, այնպես և քաջալերություն էր պարունակում: Նա օրհնեց այն տասնվեց մահաբարների¹⁰², աղոթեց մեզնից վրա և բազմապես խրատեց մեզնից: Ղևոնդիոսն ու Գրիգորը օրհնություն ստացան միմյանցից, և մեզնից ելան՝ իրենց երկիրը վերադառնալու համար:

241. Հասնելով Սեբաստիա, որը Կապադովկիայում է, մեզնից այնտեղ մնացին տալը օր, և այնտեղից Գրիգորն իր հետ վերցրեց քահանաներ, սարկավազներ ու ռաբունի-

⁹⁸ Հմմտ. Եզեկ. ԺԸ, 23, 32:

⁹⁹ Բնագրում վրիպմամբ տպագրված է 'xwyt' փխ 'xwyt'.

¹⁰⁰ Հատ Մ. վան Էսթրիկի՝ հմմտ. Դան. Ե, 21:

¹⁰¹ Տե՛ս ծանոթ. 98:

¹⁰² Տե՛ս ծանոթ. 98:

ներ, և ձեռք բերեց սուրբ տեր Հովհաննես Մկրտչի, ինչպես և այլ վկաների ոսկորները, որոնցից մեկը Պետրոս առաքյալի աշակերտներից էր:

242. Դուրս գալով այնտեղից, նրանք մտան Հայոց տերությունը, և տառապած ու հոգնած եկան Տարոն¹⁰³, երկիրը: Նրանք հասան մի կիրճի, որտեղ սակավ ջուր կար: Եվ այն կառքը, որը կրում էր այդ սրբերի նշխարները, կանգնեց ու տեղից չշարժվեց:

243. Գրիգորին մի հրեշտակ հայտնվեց և ասաց. «Այստեղ տաճար կառուցիր ու նրա մեջ տեղադրիր ադ սրբերի նշխարները, քանզի դա է Աստծու կամքը»: Այնժամ տեր Գրիգորի հրամանով ողջ շքախումբը կառուցեց մի հոյակապ տաճար, որը նա օծեց¹⁰⁴ ու այնտեղ տեղադրեց այդ սրբերի նշխարները:

244. Նա լսեց, որ այդ կողմերում, Աշտիշատ¹⁰⁵ քաղաքում, կա կուռքերի մի մեծ տաճար, որ կոչվում է Վահեվահյան¹⁰⁶: Սուրբ Գրիգորը նրանց ուղարկեց քանդելու այն, և նրանք բրիչներ, բահեր ու քլունգներ վերցրած գնացին:

245. Երբ նրանք հասան, փնտրեցին դուռը, բայց դների կախարդանքի պատճառով չգտան: Հարվածեցին պատին, բայց երկաթները ոչինչ չարեցին նրանց: Դները, քրմերը և այնտեղ գտնվող մնացյալ մարդիկ ծիծաղում էին նրանց վրա: Իսկ կուռքերի տաճարը հսկայական էր:

246. Նրանք վերադարձան սուրբ Գրիգորի մոտ ու նրան հաղորդեցին այդ: Գրիգորը դիմեց նրանց, ասելով. «Ինչո՞ւ եք տկարանում հավատի մեջ, եկեք, տեսեք»: Եվ Քրիստոսի վկան՝ տեր Գրիգոր քահանայապետը, բարձրացավ մի բլուր, որը գտնվում էր կուռքերի այդ տաճարի դիմաց, աղոթեց ու ասաց.

247. «Տե՛ր մեր, Հիսուս Քրիստոս, Աստված ճշմարիտ, ուղարկիր քո հրեշտակին, որ ավերի կուռքերի այս տաճարը և քարը քարի վրա չթողնի»:

248. Նրա ձեռքին կար մի գավազան, որի ծայրին խաչ էր ամրացված: Խոսելու ընթացքում նա կուռքերի այդ տաճարի հանդեպ դրոշմեց խաչի նշանը: Խաչից մի շունչ դուրս եկավ և քանդեց կուռքերի այդ

տաճարը, այնտեղ քարը քարի վրա չմընաց:

249. Այն փոշիացավ հարդի նման, իսկ շունչը ոչնչացրեց ամեն ինչ, մինչև որ երևաց հարթ գետինը, կարծես նրա վրա երբեք չի նստել չէր եղել: Քրմերը և մոտ երեք հազար այլ մարդիկ, ինչպես նաև բազում ոսկի և արծաթ, ոչնչացան այնտեղ:

250. Եվ վերադարձան այն եկեղեցին, որ նա կառուցել էր, և մկրտության պատրաստություն տեսնելով, նա այնտեղ մկրտեց ինը բլուր հոգու: Նա պատարագ մատուցեց և նրանց տվեց մեր Տե՛ր Հիսուս Քրիստոսի՝ մեր ճշմարիտ Աստծու մարմնի ու արյան հաղորդությունը:

251. Այնտեղ մնացին երեք օր, և նա վարդապետեց ողջ այդ երկիրն ու քահանաներ և սարկավագներ կարգեց այնտեղ: Այնտեղից նա գնաց Եկեղյաց¹⁰⁷ գավառը, որտեղ մի հոյակապ տաճար կառուցեց և մկրտեց բոլորին:

252. Իսկ Տրդատը երբ լսեց նրա համբավը, իր կնոջ, քրոջ, իր մախարարների, բազմաքանակ զորքի և անհամար ամբոխի ուղեկցությամբ ելավ նրան ընդառաջ դեպի Արծն¹⁰⁸, որտեղ երկու ամիս սպասեցին նրան:

253. Սակայն Գրիգորը ելել մկրտություններ էր անում այդ երկրում, մինչև խոզան¹⁰⁹ ու իր շրջակայքը և այլ հեռավոր գավառները: Երբ նա հասավ Արծնի երկիրը, Տրդատն ու նրա մնացյալ ուղեկիցները ելան նրան ընդառաջ, և տեսնելով նրան, երկրպագեցին ու ցնծացին մեծ ուրախությամբ:

254. Հետո նա նրան հանձնեց Հոռմի պատրիարք Ղևոնդիոսի մամակը, իսկ նա համբուրեց այն ու ընթերցեց: Սուրբ Գրիգորը թագավորին և ամբոխին պատվիրեց քառասուն օր ծով պահել և հետո մկրտվել: Ծովապահությունից հետո նա նրանց տառապ Եփրատ մեծ գետի ակունքների մոտ, մեռոնայուղ վեցրեց ու նետեց ակունքների մեջ:

255. Եվ այդ պահին երկինքը բացվեց, մի մեծ լույս իջավ այդ յուղի վրա ու լու-

¹⁰⁷ Բնագրում՝ 'ql's. Բմմտ. անդ, էջ 105—106:

¹⁰⁸ Բնագրում, ինչպես այս, այնպես և հաջորդ պարբերության մեջ՝ 'rzn. Բմմտ. անդ, էջ 101—102: Այս տեղանվան մասին տե՛ս նաև մեր սույն աշխատության առաջաբանը: Հստ երևույթին, բացառված չէ նաև, որ այս գրության տակ թաքնված է Արածանի գետի անունը:

¹⁰⁹ Բնագրում՝ kwzn. Բմմտ. M. van Esbroeck, Un nouveau témoin, p. 109. տե՛ս նաև մեր աշխատության առաջաբանը:

¹⁰³ Բնագրում՝ [rw'n, Բմմտ. M. van Esbroeck, Un nouveau témoin, p. 111.

¹⁰⁴ Բնագրում բառացի՝ qds «սրբազործեց»:

¹⁰⁵ Բնագրում՝ 'š|xš|. Բմմտ. M. van Esbroeck, Un nouveau témoin, p. 102.

¹⁰⁶ Բնագրում աղավաղված՝ wylhwyh, որը կարելի է ասորերենով իմաստավորել որպես «վա՛յ նրան, վա՛յ նրան». Բմմտ. անդ, էջ 111—112:

սավորեց բոլորին: Այդ լույսի առջև արեգակը մնացվեց մի խավարյալ առաղի:

256. Եփրատ գետը ետ դարձրեց իր ընթացքը¹¹⁰, և լավեց Աստծուն փառաբանող հրեշտակների ձայնը: Եփրատը տարածվեց ողջ այդ դաշտում և մինչև կուրծքը ծածկեց այնտեղ գտնվող բոլոր մարդկանց:

257. Այդտեղ նա մկրտեց իննսուն բյուր¹¹¹ մարդ, և գետի ջրերը նահանջեցին ու հոսեցին իրենց կարգով: Եվ այնտեղ, որտեղ լցրել էր յուղը, մի վրան խփեց և խորան պատրաստեց ու նրանց տվեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի¹¹² մեր ճշմարիտ Աստծու հաղորդությունը¹¹³:

258. Այդ լույսը նրանց վրա մնաց առավոտից մինչև իններորդ ժամը, մինչև նրանցից անուշահոտություն էր բուրում: Եվ այնտեղ, որտեղ լցրել էր յուղը, նա մի տաղավար կառուցեց, այն կոչելով «Կենաց լույսի իջման վայր»¹¹³:

259. Այնտեղ մնացին ութ օր, և այդ ութ օրվա ընթացքում նա մկրտեց ևս երեք հարյուր հազար մարդու: Իսկ այնտեղից գնաց Տրդատ թագավորի Վաղարշապատ քաղաքը և մկրտեց բոլորին:

260. Այնտեղից էլ գնաց Արտաշատ, որտեղ էր գտնվում այն վիրապը, որի մեջ նա նախկինում բանտարկվել էր: Այնտեղ նա կառուցեց մի մեծ և հոյակապ տաճար ու մկրտեց նրանց:

261. Նա շրջում էր երկրում, մկրտություններ կատարում, տաճարներ էր կառուցում, եպիսկոպոսներ, քահանաներ ու սարկավագներ կարգում, գիշեր-ցերեկ ուսուցանելով նրանց Հին և Նոր (Կտակարանները): Հայաստանում նա ձեռնադրեց չորս հարյուր եպիսկոպոս, չհաշված քահանաներին ու սարկավագներին:

262. Շրջելով բոլոր երկրներում, նա վարդապետում և մկրտություններ էր կատարում Հոռոմոց երկրի սահմաններում, Ամիդում, Մծքինում, Պարսից երկրում, մինչև Խորասան և Ալանաց սահմանը, մինչև այն վայրը, որտեղ արևն է ծագում:

263. Նա մշտապես թաքցնում էր իր անձը, առանձնացած բնակվում էր լեռներում, քառասուն օր ծով էր պառում և նմանվում Մովսեսին, Եղիային ու Հովհաննես Մկրտչին: [Մարդկանց] համոզում էր, որ վա-

նակումներ ու կրոնավորություններ դառնան և հրաժարվեն աշխարհից: Նրկիրը նա լցրեց մեծակյացներով ու հավատացյալներով:

264. Տրդատ արքան բազմիցս նրան խնդրեց, որ մնա իր մոտ, բայց նա չկամեցավ: Օրերից մի օր նախարարներն ասացին Տրդատ արքային. «Քանի որ նա չի ցանկանում մատել քո մոտ, ուղարկենք, քերել տանք նրա երկու որդիներին, որ քո կողքին լինեն»:

265. Տեսնելով Գրիգորին, Տրդատը նրան ասաց¹¹⁴ այդ բանը, և սա թույլ տվեց նրան ուղարկել ու քերել տալ նրանց: Եվ արքան իր երեք նախարարներին մի մամակով ուղարկեց Նեոկեսարիա, որ քերեն Գրիգորի որդիներին:

266. Երբ հասան այնտեղ¹¹⁵, տեսան¹¹⁶, որ նրա որդիներից մեկը՝ Վրթանեսը¹¹⁷ ամուսնացած է, իսկ մյուսը՝ Արիստակեսը¹¹⁸, վաճական է դարձել և առանձնացած բնակվում է լեռներում¹¹⁹:

267. Եվ երբ նրան հանձնեցին թագավորի մամակը, նա պատասխանեց, ասելով. «Ես մեղավոր եմ և ոչինչ չեմ խնդրում ո՛չ իմ հորից, ո՛չ էլ թագավորությունից»:

268. Նախարարները գնացին Նեոկեսարիայի եպիսկոպոսի մոտ, նրան հայտնեցին ողջ իրողությունը և նրանից խնդրեցին իրենց հետ գնալ նրա մոտ:

269. Նա էլ վերցրեց ողջ կղերականներին և մի բազմության հետ բարձրացավ լեռը, Արիստակեսի մոտ: Այլևայլ կերպ նրան համոզեցին¹²⁰ գնալ իրենց հետ, ասելով.

270. «Այստեղ դու փրկում²¹ ես միայն քո հոգին, սակայն գնա այնտեղ և օգնիր քո հորը վարդապետելու²² մեջ, և դու կշահես շատերի հոգիները, քանի որ ահա, ինչպես ասում են, քո հայրը ծերացել է»:

271. Արիստակեսը հնազանդվեց և իջավ նրանց հետ. Վրթանեսը, նրա կինն ու որդիները մույնպես [գնացին] նախարարնե-

¹¹⁴ հնագրում՝ 'mrw «ասացին»:

¹¹⁵ հնագրում վրիպմամբ տպագրված է t'mn փխ tinn.

¹¹⁶ հնագրում բառացի՝ «գտան» ('škxw).

¹¹⁷ հնագրում՝ wrt'ns.

¹¹⁸ հնագրում վրիպմամբ տպագրված է dw's'qws փխ rws't'qws.

¹¹⁹ հնագրում վրիպմամբ տպագրված է twr' փխ jwr'.

¹²⁰ հնագրում վրիպմամբ տպագրված է 'psw փխ 'pysw.

¹²¹ հնագրում վրիպմամբ տպագրված է ntr փխ nfr.

¹²² հնագրում վրիպմամբ տպագրված է blmdwh փխ blmdwh.

¹¹⁰ Հմմտ. Սաղմ. ԾԺԳ, 8, 5:

¹¹¹ հնագրում՝ «իննսուն հազար բյուր»:

¹¹² հնագրում վրիպմամբ տպագրված է ի'p փխ ի'p. Գիշտ ձևը տե՛ս § 250:

¹¹³ Ինչպես նշվեց մեր աշխատության առաջաբանում, սա Շողակաթի ավանդության արձագանքն է. հմմտ. M. ven Esbroeck, Un nouveau témoін, p. 151.

րի հետ: Երբ հասան Վաղարշապատ քաղաք, Տրդատ թագավորի մոտ, նա, տեսնելով նրանց, շատ ուրախացավ նրանցով:

272. Եվ իր թագը գլխից նետելով, նա գնաց փնտրելու նրանց հորը՝ Գրիգորին, ու նրան գտավ լեռան վրա, մի քարայրում:

273. Եվ երբ տեսավ նրան, արտասվեց ու ասաց. «Մի՞նչն ե՞րբ դու պիտի չարչարես քեզ այսպիսի չարչարանքներով և վախճես մեզանից: Ահա մենք բերել ենք քո որդիներին, ուստի դու հրամայիր եկ մեզ հետ և նրանցից մեկին կաթողիկոս դարձրու, որ քեզանից հետո մեր գլխին լինի»:

274. Նա դուրս եկավ, գնաց նրանց հետ և, Արիստակեսին կաթողիկոս կարգելով, հաստատեց¹²³ նրանց մոտ:

275. Այդ նույն ժամանակ Կոստանդիանոս հաղթող թագավորը հավատաց Աստծուն, կոտորեց տասներկու ապստամբ բռնակալներին, ոչնչացրեց կոապաշտներին և տիրեց ողջ թագավորությանը:

276. Երբ Տրդատ արքան լուր առավ, շատ ուրախացավ, և հետը վերցնելով Գրիգոր քահանայապետին ու նախարարներին, յոթանասուն հազար զորքով գնաց Հռոմոնց երկիրը, ապաստանելով քաղաքներում ու գյուղերում:

277. Լսելով նրանց համբավը, քաղաքների եպիսկոպոսներն ու քահանաները, ինչպես նաև եպարքոսները, դատավորներն ու իշխանները ելան ու էին նրանց ընդառաջ և մնացյալ մարդկանց հետ ուրախանում նրանցով:

278. Օրհնություն էին ստանում Քրիստոսի վկա, նահատակ տեր Գրիգոր կաթողիկոսից, օրհնում էին Տրդատ արքային և գոհանում Աստծուց, որ նրանց դարձրեց դեպի ճշմարտության ճանապարհը:

279. Երբ Կոստանդուպոլիս հասան, Կոստանդիանոս թագավորը բյուրավոր մարդկանց հետ նրանց դիմավորելու ելավ և ուրախացավ նրանցով: Քաղաք մտնելով, նրանք հրեշտակների ցնծությամբ ուրախացան միմյանցով:

280. Տրդատը Կոստանդիանոսին պատմեց Գրիգորի ողջ պատմությունը, թե ինչպես խոշտանգեց նրան և նետեց վիրապը, ինչպես ինքը վարազ դարձած խոտ¹²⁴ էր ուտում խոզերի հետ, ինչպես տեր Գրիգորը բժշկեց իրեն,

281. ինչպես նա վարդապետեց ողջ Հայաստանն ու շրջակա երկրները, նաև մե-

ծսմեծ սքանչելիքները, բժշկությունները և զարմանալի իրաշքները, որ Աստված գործեց նրա ձեռքով:

282. Կոստանդիանոս արքան ոտքի ելավ, երկրպագեց Գրիգորին և գոհացավ Աստծուց, որ արժանացավ նրա տեսքին: Քառասուն օր մեծ ուրախությամբ մնացին նրա մոտ:

283. Նրանք դաշն կնքեցին օգնել միմյանց թշնամիների դեմ: Այսպիսով իրենց որդիների համար կարգ սահմանեցին, որ թշնամիների դեմ իրար ձեռք մեկնելու գիտակցություն ունենան, և այդ կարգը փոխանցեն որդոց-որդի, սերնդե-սերունդ, քանզի դաշն են կնքել իրար հետ:

284. Կոստանդիանոս արքան ուղեկցեց նրանց, և նրանք վերադարձան իրենց երկիրը: Իսկ երբ Նիկիա քաղաքում ժողով գումարվեց, Արիստակես կաթողիկոսը գլխաց այնտեղ, և այնտեղ հավատո հանգանակ ու կանոններ սահմանվեցին:

285. Ժողովի ավարտից հետո նա վերադարձավ այնտեղից և իր հորը ներկայացրեց Նիկիայի հավատո հանգանակն ու այնտեղ սահմանված կանոնները: Գրիգորը համաձայնեց Նիկիայի սուրբ ժողովի սահմանած բոլոր կանոններին և դրանք հանձնարարեց հայությանը:

286. Եվ ահա դրանից ի վեր մինչև այսօր հայերը պահպանում են այդ կանոնները. ոչ ոքի հաղորդություն չեն տալիս, քանի դեռ քահանաներից մեկը չի քննել նրա մեղքերը և նա չի բացահայտել դրանք: Եվ եթե արդար է, նրան հաղորդություն է տալիս, իսկ եթե ոչ՝ նրա մեղքի համեմատ կիրառում է մի կանոն՝ Նիկիայի ժողովում սահմանված կանոնների համաձայն:

287. Դրանից հետո Գրիգորին նրազուրկ հայտնվեց, որ նա գնա Դարանաշայ¹²⁵ երկիրը, բարձրանա մի լեռ և թաղի Մանի կրոնավորություն, որը բաժանվել էր իր ընկերուհիներից, երբ Տրդատը կոտորել էր նրանց: Նա անմիջապես ճանապարհ ընկավ:

288. Երբ հասավ այնտեղ, նա գտավ մի աղբյուր և նրանից վեր մի քարայր: Իսկ նա քարայրից ձայն տվեց ու ասաց նրան. «Մի՛ գա ինձ մոտ, որովհետև ես կին եմ և ոչնչով ծածկված չեմ»:

289. Գրիգորը պատասխանեց նրան, աւելով. «Աստծուց եմ ողարկված քեզ մոտ»: Նա էլ ի պատասխան ասաց. «Ես էլ գիտեմ, բայց դու երեք օր կանգնիր այդ աղբյուրի կողքին ու հետո արի ինձ մոտ»:

¹²³ Ասորական բնագրում փակագծերի մեջ եղած հատվածը լրիվ եղծված է, ուստի թարգմանում ենք ըստ արաբերեն-քարշումի բնագրի:

¹²⁴ Բնագրում վրիպմամբ տպագրված է xsb՝ փխ csb՝.

¹²⁵ Բնագրում՝ rnylyws. Ռմմո. M. van Esbroeck, Un nouveau témoін, p. 105.

290. Ողջ այդ ժամանակ¹²⁶ նա բնակվում էր այնտեղ, սնվելով չոր խոտով, և նրա աղոթքների շնորհիվ էր Աստված նրան ուղարկել այդ աղքատիւրը:

291. Երեք օր հետո Գրիգորը մտավ այդ քարայրը և նրան մեռած գտավ: Այնտեղ կար հարդից հյուսված մի խսիր, դրանով էլ թաղեց նրան:

292. Այնտեղ նա ապրեց երեսուն տարի: Արքան ու նրա նախարարները նրան փնտրում էին ողջ երկրում, բայց չէին գտնում, և ոչ իսկ լուր ստանում նրա մասին: Եվ նա հանգավ այդ քարայրում. հրեշտակները նրա հոգին շքով փոխադրեցին վալեյքների դրախտը:

293. Այդտեղից հեռու գտնվող հովիվները լույսի ճառագայթներ տեսան, որ փայլում ու լուսարձակում էին, այդ վայրից, և օդում հաճելի հոտ էր բուրում այդ կողմից:

294. Հովիվներն ուղղվեցին այնտեղ, գտան Քրիստոսի նահատակ ու վկա տեղ Գրիգորի մարմինը և թաղեցին նրան. նրանից անուշահոտության պես հաճելի բուրմունք էր տարածվում: Նրանք սաստիկ վախեցան և գնացին-պատմեցին այդ բաները Դարանաղյաց¹²⁷ քաղաքում:

295. Բոլոր քաղաքացիները այդ հովիվների ուղեկցությամբ ելան-գնացին այնտեղ, փնտրեցին Գրիգորի մարմինը, բայց չգտան:

296. Աստված դա արեց նրա նկատմամբ հայերի տածած հավատի պատճառով, որպեսզի դեռևս [Սուրբ] Գիրքը չսերտած, չպաշտեն նրա մարմինը Աստծու փոխարեն: Այդպես նա արել էր մարգարեների պես Մովսեսի ժամանակ, նրան թաղելով

Նուրավ¹²⁸ լեռան վրա և թաքցնելով նրա գերեզմանը, որպեսզի իսրայելացիք Աստծու փոխարեն այն չպաշտեն:

297. Իսկ Ջենոն կայսեր ժամանակ ապրում էր մի արեղա վանական, որ կոչվում էր Էմրա¹²⁹: Նրան երազում հայտնվեց, որ գնա Դարանաղյաց քաղաք, այնտեղ գրտնրվող լեռը,

298. «որտեղ կգտնես մի քարայր, որի մեջ լույսի ճառագայթ կա: Հանիր այնտեղից Գրիգոր հայի մարմինը, վերցրու-տար Եկեղիք¹³⁰, թաղիր այնտեղ և վրան տաճար կառուցիր»:

299. Եվ այն բանից հետո, երբ գնաց-գրտավ նրան, մեծ հանդիսությամբ քերեց Թորդան¹³¹: Ողջ Հայաստանը ցնծաց այդ առթիվ: Նրան թաղեցին իր որդիների կողքին, որոնք թաղված էին այնտեղ, և նրա վրա մի հռչակապ տաճար կառուցեցին:

300. Իսկ Հերակլիոսի¹³² օրոք կայսրը [գորք] ուղարկեց, գրավեց քաղաքը և վերակառուցեց այդ շքեղ տաճարը: Եվ արդ, սուրբ Գրիգորի և նրա բոլոր սուրբ ընկերակիցների, ես առավել սուրբ կույս Մարիամ Աստվածածնի աղոթքներով թող Տերը ների ու թողություն տա Սուրբ Եկեղեցու մանուկներին, ամեն:

Ավարտվեց սուրբ Գրիգորի՝ Հայաստանը լուսավորողի¹³³ պատմությունը, որի աղոթքը թող մեզ հետ լինի, ամեն:

¹²⁶ Բնագրում՝ ոնւ.

¹²⁹ Բնագրում՝ 'mr'. հայերեն Գառմիկ անվան աւորիւն թարգմանությունն է. տե՛ս մեր աշխատության ատաղաբանը:

¹³⁰ Բնագրում՝ q'ys. հմմտ. ծանոթ. 107:

¹³¹ Բնագրում՝ twrt. հմմտ. M. van Esbroeck, *Un nouveau témoin*, p. 111.

¹³² Բնագրում՝ 'rq'!. հմմտ. ամդ, էջ 106:

¹³³ Հմմտ. ծանոթ. 80:

¹²⁶ Բնագրում վրիպմամբ տպագրված է: zby՝ փխ չիո՝.

¹²⁷ Բնագրում՝ րwnylyws.. հմմտ. ծանոթ. 125:

